մենայն աւուր պարտին գնալ յեկեղեցին և ձայնաւոր ժամս ասել, և ի պատարագի գտանիլ, զի եթէ մինն ի քահանայից ոչ երթիցէ յեկեղեցին, կորուսանէ զնոյն աւուր եկամուտն։

Եւ եկեղեցիք նոցա բոլորակ են, և կէս միջաց չափ բարձրութեամբ վանդակաւ յերիս բաժանեալ են, և ի մէջ տեղին մատուցանի պատարագ քահանայիւք և սպասաւորք. երկրորդ տեղին է դեռ ոչ ամուսնացելոց. երրորդ տեղին է ամուսնացելոց։ Եւ չորրորդ տեղին է արտաքոյ յարկի եկեղեցւոյն՝ մեղաւորաց, որք են ի սրահն եկեղեցւոյն և բացօթեայք են։ Զի թէ ի մէջ ամուսնացելոց և թէ ոչ ամուսնացելոց ի մեղս ինչ անկանիցի ոք, ըստ խղճմտանաց իւրոց ոչ գնայ ի յիւր տեղին ի մէջ եկեղեցւոյն, այլ ինքնին գնացեալ կանգնի յայն տեղին մեղաւորաց, մինչեւ խոստովանեսցի, և ոչ ոք յամօթ առնէ զնա թէ մեղուցեալ իցէ։

Իսկ ի զուխ քահանայից արտաքոյ եկեղեցւոյն շապղայակերպ սպիտակ բեհեզ փաթութեալ է, բայց գագաթ նոցա բաց է, և ի ժամերգութեան հանեն զայն զըլխարկն. և առնուն ի ձեռս իւրեանց զօրէն խաղալկաց զչալբարա, և ոմանք ջնդրբտաղ, և ի յերգս ի տեղիս տեղիս հարկանելով մին զմիւսն ձայնս արձակէ, և երբեմն եւս ծափ զծափի հարկանեն, և երբեմն ի վեր ոստոստեն ժամ ասացողքն։ Ահա այսու կերպիւ է ժամասացութիւն նոցա։

Իսկ աշխարհականք ի ցոյցս՝ պսակաւ մի կին ունին, բայց ոմանք զհարճս եւս պահեն, և ի հարճից ծնեալ զաւակն եւս համարձակ պահեն, բայց նոյն զաւակքն չեն ի պատուի և ի վարկման։

Այլ եւս թէ ի հասարակ մարդկանց և թէ ի մեծամեծաց մեռանիցի ոք, ազգականք և կամ մօտաւոր բարեկամք նոցա և սպասաւորքն, ապականեն զերեսս և զճակատն իւրեանց, զի սպառուածօք չուխայի այնքան շփեն զերեսն և զճակատն մինչեւ հեղուն զարիւնս առ ի տանիլ զսուգն մեռնողին։

Այլ եւս յոյժ զարմանալի և լսողաց անհաւատալի լուացք ունին, որ թովմաճանն եւս զիւր հանդերձսն տայր լուանալ այնու կերպիւ։ Նախ լուացողքն են այր մարդիկ, և տանին զաղտեղեալ հանդերձն յափն գետոյն և ծաւալեն զմեծ կովու կաշի մի և շուրջ զնովաւ շարեն քարինս, որովք ի մէջն փոս լինի, և անդէն լնուն նախ զսպիտակ հանդերձսն և զցուրտ ջուրն, և ոտիւք կոխոտելով և ի վեր վեր ոստոստելով և երգս երգելով թանայ զամենեսեան։ Այս տեսցուք այժմ որ ցուրտ ջրով և առանց ջեռուցեալ մոխրէ ջրով և թարց օճառի ո՞րպէս կարիցէ սպիտակացուցանել զիւղաճենճեր թաթաւեալ և զսեւացեալ զհանդերձսն։ Ահա սովաւ, զի անդ ի հապէշ տեսակ մի ընդոյ բուսանի, ժողովեն զայն և չորացուցանեն, և ծեծեն և մոխրազոյն փոշի լինի, և ի յայս փոշւոյ զերիս և զչորս բուռս ածէ ի վերայ հանդերձիցն, և սկսանի վերստին կոխոտել, և յայնժամ փրփրի առաւել քան զօճառն, ապա թափէ զջուրն, և այսպէս երիցս առնելով որքան ճենճերոտ և իւղոտ սեւացեալ իցէ, մաքրի զտի և իբրեւ զձիւն սպիտականայ։ Ըստ այսմ կերպի և զգուշաւոր լուացումն հանդերձիցն առնեն...։

Այլ եւս գիտասջիք զի ի յերկիրս հապէշու բազմատեսակ հանք գոն, որպէս կարմիր պղինձ, դեղին պղինձ, այլեւս երկաթ բազում, ի գնալն ի Ցիբսէէն մինչև ի Աովայ և ի Կեոնտէր ի բազում տեղիս ի ճանապարհին ի վերայ երկաթոյ ընթանային։ Սակայն ոչ ունին զայնքան անտառս, զի խալհանէս արասցեն. և ոչ եւս գիտեն զառնելն, որպէս զոսկւոյ եւս զտելն ոչ գիտեն։ Զի հեռի ի Կեոնտէրէն երկու երեք աւուրց ճանապարհաւ զոյ բարձր լեառն մի ոսկւոյ՝ յոր ոչ կարեն ելանել, և սպասեն զի յորժամ մրրկաւ և կարկտով անձրեւեսցէ, յայնժամ ջրոյ և կարկտի բռնութեամբն ընդ ջրոյ ոսկիքն իջանեն ի վայր, և լինի ի ներքոյ լերին ծով մի. և ապա իբրեւ ցամաքի ջուրն և չորանայ, յայնժամ առաքին ի թաղաւորէն արք երկերիւր ի պահել և ի ժողովել զոսկին, համանգամայն եւս զողանալ։